Արձանագրություն N 2

<<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/6>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով իրականացվող ընթացակարգի գնահատողի հանձնաժողովի բացման նիստի

25 ապրիլի 2016թ.
ք. Երևան
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Վասիլյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝ Շ. Իսախանյան /գնահատող/,
Ն. Քեռյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան
Բացակայում էին՝ Ն. Աբովյան, Վ. Պիվազյան

1. <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/6>> ծածկագրով ընթացակարգի նախագահ նշանակելու մասին

(Տ. Վասիլյան)

Պայմանավորված հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինությամբ՝ նիստը նախագահեց Տաթևիկ Վասիլյանը՝ համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 10.02.2015թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Տեղեկություններ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

(Տ. Վասիլյան)

2.1 Հայտերը բացվել են ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկի վարչական շենքում, 2016 թվականի ապրիլի 25-ին ժամը 10:00-ին, որը համընկել է հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

2.2 Գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 65 280 /Վաթսունհինգ հազար երկու հարյուր ութսուն/ ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/6>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Վասիլյան)

Ընդունել ի գիտություն, որ էլեկտրոնային համակարգով շրջանակային համաձայնագրերի միջոցով իրականացվող ընթացակարգին առգիծ հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	<<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ
2	<<ՍԵԳ>> ՍՊԸ
3	<<Օազիս կոմպյուտեր>> ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3.Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին

(Տ. Վասիլյան)

3.1 <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ի, <<ՍԵԳ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

3.2 <<Օազիս կոմպյուտեր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն հրավերի պահանջներին, մասնավորապես, ներկայացված հավելված 3.3-ը /հայտարարություն ֆինանսական միջոցների մասին/ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Տ. Վասիլյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Ցանցային բաժանարար				
Մասնակցի անվանումը	Առաջարկած գինը			
	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր
<<ՍԵԳ>> ՍՊԸ	59 000	6 000	-	65 000
<<Օազիս կոմպյուտեր>> ՍՊԸ	52 560	2190	10 950	65 700
<<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ	112 475	12 500	24 995	149 970

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան անճշտություններ:

2.3 <<Օազիս կոմպյուտեր>> ՍՊԸ-ի և <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնման առարկայի նախահաշվային արժեքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

5.Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանության շտկման մասին

(Տ. Վասիլյան)

Հաշվի առնելով, որ <<Օազիս կոմպյուտեր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և 25.04.2016թ. էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /27.04.2016թ. ժամը 10:00-ն/ շտկել 3.2 կետում նշված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

6. Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Տ. Վասիլյան)

Հաստատել հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 27.04.2016թ., ժամը 10:00-ին, ՀՀ Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկ,

իրավաբանական և գնումների կազմակերպման բաժին, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Վասիլյան

Անդամ՝ ---------- Շ. Իսախանյան

---------- Ն. Քեռյան

Քարտուղար ---------- Ա. Համբարձումյան